**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության**
**անշարժ գույքի շուկան 2008թ. II եռամսյակում**

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակը: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2008թ. II եռամսյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել են 2043 իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2008թ. I եռամսյակի համեմատ աճել է՝ 20,2%-ով, իսկ 2007թ. II եռամսյակի համեմատ՝ 48,8%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալները ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *850* | *8,9%* | *926* | *19,6%* | *774* |
| Ասկերան | *122* | *71,3%* | *209* | *6,6%* | *196* |
| Մարտունի | *143* | *93,7%* | *277* | *57,4%* | *176* |
| Մարտակերտ | *61* | *4,2 անգամ* | *259* | *94,7%* | *133* |
| Հադրութ | *37* | *2,2 անգամ* | *80* | *50,9%* | *53* |
| Շուշի | *109* | *16,5%* | *127* | *-36,5%* | *200* |
| Քաշաթաղ | *51* | *3,2 անգամ* | *165* | *-1,8%* | *168* |
| ***Հանրապետություն*** | ***1373*** | ***48,8%*** | ***2043*** | ***20,2%*** | ***1700*** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումները, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *297* | *-5,1%* | *282* | *-16,3%* | *337* |
| *Նվիրատվություն* | *91* | *-1,1%* | *90* | *0,0%* | *90* |
| *Վարձակալում* | *130* | *240,0%* | *442* | *97,3%* | *224* |
| *Գրավադրում* | *166* | *105,4%* | *341* | *59,3%* | *214* |
| *Ժառանգություն* | *89* | *53,9%* | *137* | *57,5%* | *87* |
| *Օգտագործում* | *8* | *-37,5%* | *5* | *-44,4%* | *9* |
| *Սեփականաշնորհում* | *140* | *64,3%* | *230* | *-13,2%* | *265* |
| *Մասնավորեցում* | *70* | *-31,4%* | *48* | *-39,2%* | *79* |
| *Առաջնային գրանցում* | *382* | *22,5%* | *468* | *18,5%* | *395* |
| *Ընդամենը գործարք* | ***1373*** | ***48,8%*** | ***2043*** | ***20,2%*** | ***1700*** |

2008թ. II եռամսյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել են 282 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է՝ 16,3%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 5,1%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել են 71, իսկ բնակելի տների նկատմամաբ՝ 44 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ:

2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխություններն ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *134* | *-7,5%* | *124* | *-1,6%* | *126* |
| Ասկերան | *46* | *-32,6%* | *31* | *-54,4%* | *68* |
| Մարտունի | *43* | *9,3%* | *47* | *23,7%* | *38* |
| Մարտակերտ | *18* | *83,3%* | *33* | *-21,4%* | *42* |
| Հադրութ | *6* | *66,7%* | *10* | *0,0%* | *10* |
| Շուշի | *43* | *-20,9%* | *34* | *-30,6%* | *49* |
| Քաշաթաղ | *7* | *-57,1%* | *3* | *-25,0%* | *4* |
| ***Հանրապետություն*** | ***297*** | ***-5,1%*** | ***282*** | ***-16,3%*** | ***337*** |

2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *N* | *Անշարժ գույքի տեսակները* | *Առուվաճառքի գործարքների քանակները* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
| 1 | *բազմաբնակարան շենքի բնակարան* | *77* | *-7,8%* | *71* | *2,9%* | *69* |
| 2 | *առանձնատուն* | *57* | *-22,8%* | *44* | *0,0%* | *44* |
| 3 | *արտադրական նշ. օբյեկտ* | *12* | *8,3%* | *13* | *2,6 անգամ* | *5* |
| 4 | *հասարակական նշ. օբյեկտ* | *37* | *-32,4%* | *25* | *-24,2%* | *33* |
| 5 | *ավտոտնակ* | *7* | *-42,9%* | *4* | *-20,0%* | *5* |
| 6 | *հող* | *107* | *16,8%* | *125* | *-30,9%* | *181* |
| | *Ընդամենն անշարժ գույք* | ***297*** | ***-5,1%*** | ***282*** | ***-16,3%*** | ***337*** |

2008թ. I և II եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները :

### *Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների*

| *Քաղաքներ* | *2008թ. I եռամսյակ* | | | *2008թ. II եռամսյակ* | | | *փոփոխումը 2008թ. I եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *1 քմ արժեքը /$/* | | | *1 քմ արժեքը /$/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 685,0 | 799,0 | **742,0** | 790,0 | 860,0 | **825,0** | ***11,2%*** |
| Ասկերան | 146,0 | 194,0 | **170,0** | 160,0 | 210,0 | **185,0** | ***8,8%*** |
| Մարտունի | 145,0 | 191,0 | **168,0** | 157,0 | 205,0 | **181,0** | ***7,7%*** |
| Մարտակերտ | 72,0 | 91,0 | **81,5** | 80,0 | 95,0 | **87,5** | ***7,4%*** |
| Հադրութ | 91,0 | 101,0 | **96,0** | 96,0 | 108,0 | **102,0** | ***6,2%*** |
| Շուշի | 94,0 | 250,0 | **182,0** | 130,0 | 280,0 | **205,0** | ***12,6%*** |

*Բնակելի տներ*

| *Քաղաքներ* | *2008թ. I եռամսյակ* | | | *2008թ. II եռամսյակ* | | | *փոփոխումը 2008թ. I եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 74000,0 | 105000,0 | **89500,0** | 76300,0 | 126500,0 | **101400,0** | ***13,3%*** |
| Ասկերան | 11000,0 | 17500,0 | **14250,0** | 13200,0 | 18800,0 | **16000,0** | ***12,3%*** |
| Մարտունի | 9500,0 | 15500,0 | **12500,0** | 10900,0 | 16800,0 | **13850,0** | ***10,8%*** |
| Մարտակերտ | 6500,0 | 9500,0 | **8000,0** | 7300,0 | 10200,0 | **8750,0** | ***9,4%*** |
| Հադրութ | 7250,0 | 9500,0 | **8375,0** | 7800,0 | 10500,0 | **9150,0** | ***9,2%*** |
| Շուշի | 8500,0 | 15000,0 | **11750,0** | 9800,0 | 16900,0 | **13350,0** | ***13,6%*** |

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը հիմք է հանդիսանում պնդելու, որ վերջին երկու եռամսյակների ընթացքում անշարժ գույքի գների դինամիկան աճման միտում ունի :

2008թ-ի II եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 442 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է՝ 97,3%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 3,4 անգամ:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *31* | *12,9%* | *35* | *52,2%* | *23* |
| Ասկերան | *44* | *31,8%* | *58* | *56,8%* | *37* |
| Մարտունի | *33* | *3,4 անգամ* | *114* | *2,1 անգամ* | *54* |
| Մարտակերտ | *9* | *18,1 անգամ* | *163* | *3,8 անգամ* | *43* |
| Հադրութ | *5* | *20,0%* | *6* | *-14,3%* | *7* |
| Շուշի | *1* | *6,0 անգամ* | *6* | *2,0 անգամ* | *3* |
| Քաշաթաղ | *7* | *8,6 անգամ* | *60* | *5,3%* | *57* |
| ***Հանրապետություն*** | ***130*** | ***3,4 անգամ*** | ***442*** | ***97,3%*** | ***224*** |

2008թ-ի II եռամսյակում հանրապետությունում գրանցվել են, 1889,92 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության 258 գործարքներ, որոնց քանակները և մակերեսները ըստ հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2008թ-ի II եռամսյակում վարձակալված հողերի | |
|---|---|---|
| | **քանակը** | **մակերեսը /հա/** |
| *Ասկերան* | *52* | *471,02* |
| *Մարտունի* | *107* | *279,8* |
| *Մարտակերտ* | *51* | *465,0* |
| *Հադրութ* | *0* | *0,0* |
| *Շուշի* | *0* | *0,0* |
| *Շահումյան* | *8* | *140,0* |
| *Քաշաթաղ* | *40* | *534,1* |
| ***Հանրապետություն*** | ***258*** | ***1889,92*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում ՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողերը:

2008թ-ի II եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 341 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է՝ 59,3%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2,0 անգամ:

2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում հանրապետության շրջաններում անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *Անշարժ գույքի տեսակները* | *Գրավադրված անշարժ գույքի քանակ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
| *1* | *բ/բ շենքի բնակարան* | *67* | *2,0 անգամ* | *134* | *69,6%* | *79* |
| *2* | *առանձնատուն* | *31* | *2,9 անգամ* | *90* | *95,7%* | *46* |
| *3* | *արտադրական նշ. օբ.* | *2* | *13,5 անգամ* | *27* | *2,1 անգամ* | *13* |
| *4* | *հասարակական նշ. օբ.* | *55* | *36,4%* | *75* | *5,6%* | *71* |
| *5* | *ավտոտնակ* | *2* | *3,0 անգամ* | *6* | *6-ով ավել* | *0* |
| *6* | հող | *9* | *0,0%* | *9* | *80,0%* | *5* |
| | *Ընդամենը* | ***166*** | ***2,0 անգամ*** | ***341*** | ***59,3%*** | ***214*** |

2007-2008թթ. II եռամսյակում և 2008թ. I եռամսյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *136* | *72,8%* | *235* | *54,6%* | *152* |
| Ասկերան | *9* | *4,6 անգամ* | *41* | *2,0 անգամ* | *20* |
| Մարտունի | *12* | *2,7 անգամ* | *32* | *68,4%* | *19* |
| Մարտակերտ | *1* | *7,0 անգամ* | *7* | *2,3 անգամ* | *3* |
| Հադրութ | *5* | *40,0%* | *7* | *75,0%* | *4* |
| Շուշի | *3* | *6,0 անգամ* | *18* | *20,0%* | *15* |
| Քաշաթաղ | *0* | *1-ով ավել* | *1* | *0,0%* | *1* |
| ***Հանրապետություն*** | ***166*** | ***2,0 անգամ*** | ***341*** | ***59,3%*** | ***214*** |

2008թ-ի II եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 278 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է` 19,2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է` 32,4%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2007-2008թթ. II եռամսյակներում և 2008թ. I եռամսյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *II եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *142* | *13,4%* | *161* | *-15,7%* | *191* |
| Ասկերան | *2* | *-50,0%* | *1* | *-66,7%* | *3* |
| Մարտունի | *4* | *-50,0%* | *2* | *-80,0%* | *10* |
| Մարտակերտ | *11* | *-72,7%* | *3* | *-62,5%* | *8* |
| Հադրութ | *4* | *-25,0%* | *3* | *-62,5%* | *8* |
| Շուշի | *44* | *-29,5%* | *31* | *-45,6%* | *57* |
| Քաշաթաղ | *3* | *25,7 անգամ* | *77* | *14,9%* | *67* |
| ***Հանրապետությու*** | ***210*** | ***32,4%*** | ***278*** | ***-19,2%*** | ***344*** |


ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»
ՀԵՌ : 5-17- 49